**09/2021**

**Տեղեկանք**

Սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից 2021 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են շահերի բախման հնարավոր դեպքերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող թվով երեք հրապարակումների ուսումնասիրություններ (հղումներ՝ https://hetq.am/hy/article/135020, https://armlur.am/1078891/, https://lurer.com/?p=433148&l=am), որոնք վերաբերել են Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանին և Մարտունի համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանին:

Արդյունքում արձանագրվել է, որ ուսումնասիրված դեպքերում պաշտոնատար անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունները հաղթող են ճանաչվել նաև այն մարմինների կողմից կազմակերպված գնումների մրցույթներում, որտեղ տվյալ անձը պաշտոն է զբաղեցրել:

Էլեկտրոնային գնումների համակարգում առկա համընդհանուր հասանելիության տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ ուսումնասիրված բոլոր դեպքերում պետական պաշտոն զբաղեցնող կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ պայմանագրերը չեն ստորագրվել այն պաշտոնատար անձի կողմից, ում հետ փոխկապակցված է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունը, ինչը, սակայն, Հանձնաժողովի գնահատմամբ չի նվազեցնում այս գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և չի բացառում մրցույթների իրականացման գործընթացում պաշտոնատար անձանց կողմից իրենց ազդեցության օգտագործումը:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը ստիպված է արձանագրել, որ գործող օրենսդրության կարգավորումները չեն սահմանում թվարկված իրավիճակները՝ որպես շահերի բախում, ինչի արդյունքում Հանձնաժողովի հնարավոր գործողություններն այս առնչությամբ ներկայում խիստ սահմանափակ են:

Հանձնաժողովի գնահատմամբ բոլոր նման դեպքերում հավանական է պաշտոնատար անձանց կողմից իրենց ազդեցության կիրառումը, սակայն ֆորմալ ընթացակարգերի պահպանման ուժով տվյալ դեպքերում փաստացի բացակայում են վարույթի հարուցման հիմքեր: Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ նույնիսկ այն դեպքում, երբ ուսումնասիրությունը ցույց տար, որ շահերի բախում առկա չէ, անաչառ դիտորդի մոտ կարող է ձևավորվել ողջամիտ կասկած տվյալ պետական պաշտոնյայի գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության մասին, ինչը խաթարում է պետական կառույցների գործունեության նկատմամբ հասարակական վստահությունը:

Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ իր գործունեության ամբողջ ժամանակահատվածում որևէ պաշտոնատար անձի կողմից շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարություն չի ներկայացվել, ինչը խիստ մտահոգիչ ցուցանիշ է:

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնաիրության ամփոփ արդյունքները ներառված են ստորև ներկայացված աղյուսակում:

| Հ/Հ | Կազմակերպությա ն անվանում | Կապը պաշտոնատար անձի հետ | Ներկայացված հայտեր | Ընդհանուր տեղեկություններ | Պայմանագրի արժեք | Եզրակացություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն | Համաձայն մամուլի հրապարակման Կազմակերպությունը պատկանում է Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ամուսնուն՝ Ստեփան Ավանեսյանին | 2016 թվականից մինչև օրս ներկայացրել է գնումների կատարման 1137 հայտ և հաղթող է ճանաչվել 432 դեպքերում, որից 285-ը կամ մոտ 66%-ը 2019 թվականի հունվարի 1-ից հետո: Կնքված 432 պայմանագրերից 10-ի դեպքում պատվիրատու է հանդիսացել ՀՀ առողջապահության նախարարությունը: | Պայմանագրերից 5-ը կնքվել է Անահիտ Ավանեսյանի կողմից 2018 թվականի մայիսի 24-ին ՀՀ առողջապահությ ան նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց հետո: | Կնքված պայմանագրեր ի հանրագումարը կազմել է 959,607,778 ՀՀ դրամ, որից 322,207,757 ՀՀ դրամը ՀՀ առողջապահու թյան նախարարությ ան հետ կնքված պայմանագրեր ն են: | Պայմանագրերը չեն ստորագրվել այն պաշտոնատար անձի կողմից, ում հետ փոխկապակցված է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունը: Տվյալ դեպքում «ԱՐՖԱՐՄԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերության հետ պայմանագրերը ստորագրվել են Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կողմից: Հետևաբար՝ վարույթ հարուցելու համար օրենքով նախատեսված հիմքեր առկա չեն: |
| 2. | «Արգավանդ կահույք» սահմանափակ պատասխանատվության ընկերություն | Կազմակերպության 100% բաժնեմասերը պատկանում են Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Սամվելի Նարիբեկյանին | 2017 թվականից մինչ օրս «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ն ներկայացրել է գնումների կատարման 242 հայտ 151-ի դեպքում ճանաչվել հաղթող (տոկոսային ցուցիչ 62 %), որից 123-ը կամ մոտ 81%-ը 2019 թվականի հունվարի 1-ից հետո, 8-ի դեպքում պատվիրատու է հանդիսացել ՀՀ Ազգային ժողովը: | Ընկերությունը որպես մատակարար ՀՀ Ազգային ժողովի հետ վերջին պայմանագիրը կնքել է 2020 թվականի նոյեմբերի 17-ին՝ մինչ Վ. Նարիբեկյանի պաշտոնի ստանձնումը: Ընկերությունը մինչ 2018 թվականի մայիս ամիսը ներկայացրել է գնումների | «Կնքված պայմանագրեր ի հանրագումարը կազմել է 311,906,085 ՀՀ դրամ, որից 30,623,020 ՀՀ դրամը Ազգային ժողովի հետ կնքված պայմանագրեր ն են: | «Արգավանդ կահույք» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթներում հաղթող է ճանաչվել մինչև ընկերության սեփականատեր Վահան Նարիբեկյանի պաշտոնի ստանձնումը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | կատարման 12 հայտ, որոնցից 3-ի դեպքում ճանաչվել է հաղթող (տոկոսային ցուցիչ՝ 25 %): 2018 թվականի մայիս ամսից հետո ընկերությունը ներկայացրել գնումների կատարման 230 հայտ, որոնցից 148-ի դեպքում ճանաչվել է հաղթող (տոկոսային ցուցիչ՝ 64 %): | | Հետևաբար վարույթ հարուցելու համար օրենքով նախատեսված հիմքեր առկա չեն : |
| 3. | «Դամկար» սահմանափակ պատասխանատվո ւթյամբ ընկերություն | Կազմակերպության 100% բաժնեմասերը պատկանում են Գարիկ Սամվելի Նարիբեկյանին, ով, | 2018 թվականից մինչ օրս «Դամկար» ՍՊԸ-ն ներկայացրել է գնումների | ՀՀ Ազգային ժողովի հետ վերջին պայմանագիրը կնքել է 2021 | Կնքված պայմանագրեր ի հանրագումարը կազմել է | «Դամկար» սահմանափակ պատասխանատվու թյամբ ընկերությունը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | համաձայն մամուլի հրապարակման, հանդիսանում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանի եղբայրը | կատարման 106 հայտ, որոնցից 60-ի դեպքում ճանաչվել է հաղթող, որից 55-ը կամ մոտ 92%-ը 2019 թվականի հունվարի 1-ից հետո, 6-ի դեպքում պատվիրատու է հանդիսացել Ազգային ժողովը: | թվականի ապրիլի 17-ին, այսինքն մինչ Վ. Նարիբեկյանի պաշտոնի ստանձնումը: | 100,387,214 ՀՀ դրամ 4,487,700 ՀՀ դրամը Ազգային ժողովի հետ կնքված պայմանագրեր ն են: | Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթներում հաղթող է ճանաչվել մինչև Վահան Նարիբեկյանի պաշտոնի ստանձնումը, ում հետ փոխկապակցված անձ է հանդիսանում ընկերության սեփականատեր Գարիկ Նարիբեկյանը: Հետևաբար վարույթ հարուցելու համար օրենքով նախատեսված հիմքեր առկա չեն : |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | «Արմեն-Մար» սահմանափակ պատասխանատվության ընկերություն | Կազմակերպության 100% բաժնեմասերը պատկանում են Մարտունի համայնքի ղեկավար Արմեն Ավետիսյանի կնոջը՝ Մարինա Հովեյանին | 2020 թվականից մինչև օրս ներկայացրել է գնումների կատարման 4 հայտ (երկուսը դեռևս գնահատման փուլում են), հաղթող է ճանաչվել 1-ում: | Պայմանագիրը կնքվել է 2020 թվականի սեպտեմբերի 9-ին՝ Արմեն Ավետիսյանի կողմից Մարտունու համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո: | Պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 29,500,010 ՀՀ դրամ | Մարտունու համայնքապետարանի կողմից պայմանագիրը չի ստորագրվել այն պաշտոնատար անձի կողմից, ում հետ փոխկապակցված է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունը: Տվյալ դեպքում «Արմեն-Մար» սահմանափակ պատասխանատվության ընկերության հետ պայմանագրերը ստորագրվել են Մարտունի համայքի ղեկավարի տեղակալի կողմից: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հետևաբար վարույթ հարուցելու համար օրենքով նախատեսված հիմքեր առկա չեն: |